ԱՐՄԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ազգային դպրոցի վերակառուցման շրջանում դպրոցի առջև դրվեցին նոր խնդիրներ, որոնց կատարումը պահանջում է ուսումնադաստիարակչական աշխատանքի գաղափարական ազդեցության տարբեր ձևերի ու միջոցների կատարելագործում: Խոսքը վերաբերում է նաև հասունացող սերնդին անցյալի ու ներկայի աշխատավոր ժողովրդի առաջադիմական ավանդույթների ոգով դաստիարակելուն: Անշուշտ, ազգային առաջադիմական ավանդույթների օգտագործումն այսօր էլ կարող է մեծապես նպաստել աճող սերնդի բարոյական դաստիարակության կատարելագործմանը, կարող է դաստիարակությանը պատմական թափ հաղորդել, հնարավորություն ստեղծել խելամտորեն օգտագործելու հայ ժողովրդի բազմադարյա հարուստ փորձը:

Դեռևս հայ մեծ լուսավորիչ մանկավարժ Խ. Աբովյանը գնահատելով ազգային ավանդույթների դաստիարակչական դերը, մատնանշում է, որ ամեն մի ուսուցում ու դաստիարակություն պետք է համապատասխանի ժողովրդի ոգուն, վիճակին և պահանջմունքներին: Հայերը՝ «խաղաղության օրերին աշխատասեր են և հեզ, թշնամիների սրերի դեմ՝ արիասիրտ ու համբերատար, մտքի և բարոյական ուժերի զարգացման մեջ՝ ճոխ ու քնքուշ, ազգային սրբությունների անձեռնմխելիությունը պահպանելիս՝ հպարտ և անընկճելի»:[1] Մեծ լուսավորչի ամեն մի խոսքի ու տողի մեջ ցայտում է բոցավառ սերը դեպի հայրենիքը, նրա բնությունը, անցյալը, պատմական մեծ դեպքերը, մշակույթը, իր ժողովրդի սովորություններն ու ավանդույթները:

Ըստ Աբովյանի ժողովուրդն է առաջադիմական ավանդույթների, սովորույթների, հեքիաթների, զրույցների, երկերի, առածների հեղինակը: Նա այնքան բարձր է գնահատում ժողովրդի ստեղծած հոգևոր արժեքները, որ նպատակ ուներ դրանք հավաքել, գրի առնել, «լույս աշխարհ հանել» նախ՝ որ չկորչեն և ապա՝ օգտագործվեն գալիք սերնդի կողմից. «Մուրազս հենց էսա

[1] Տե՛ս, Խ. Աբովյան, Եւժ., Երևան 1956, հ.7, էջ 174, հ.8:

էլել, - «Վերքի» առաջաբանում պատմում է Աբովյանը,- որ գնամ գիշեր-ցերեկ ընկնեմ գեղեգեղ ու մեր ազգի արած բաները հավաքեմ գրեմ»:[2] Ուշադրության է արժանի ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի «Մի երկու խորհուրդ մեր գավառական մամուլին» հոդվածում արտահայտած այն դրույթը, որ հարկավոր է հավաքել, գրի առնել ու հրատարակել ժողովրդի անգին գանձերը: Չէ որ «ապագա սերունդը» շնորհակալ կլինի Չեզանից»: Նա գրում է. «Ամեն մի ժողովուրդի ու մարդկային ցեղի, այդ թվում նաև հայ ժողովրդի բարոյական ոգին ոչ թե նրա կողմից իրականացված ավերվածությունների ու կողոպուտների, ոչ թե «հին վանքերի միստիկ կամարների տակ» է, այլ «Սասունի, Զեյթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերում», «Շիրակի, Արարատի, Մուշի դաշտերում, երգերում, խաղաղ աշխատանքում «Վերք Հայաստանի» հայրենասիրական ոդբի հառաչանքներում ու մորմոքներում»:[3]

Վերոհիշյալ և այլ գործիչների, մտավորականների հիմնարար դրույթները ազգային ավանդույթների դաստիարակչական նշանակության մասին ուսանելի է, և այսօր ստեղծագործաբար կիրառվում է ազգային դպրոցում: Այսօր հույժ անհրաժեշտ է օգտվել մեր նախնիների մշակութային ավանդույթներից՝ զարգացնելու դպրոցականների ոչ միայն գեղագիտական զգացողությունը, այլև նրանց ստեղծագործական կարողությունները, անհատականությունը, ազգային ինքնաճանաչողությունը, ինքնագիտակցությունը, բարոյագեղագիտական ճաշակը:

Հետազոտության իմաստով սույն հոդվածում կդիտարկենք միայն աշխատանքային ավանդույթների օգտագործումը որպես բարոյական դաստիարակության օպտիմալացման միջոց:

Դժվար է պատկերացնել անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը առանց պատշաճ աշխատանքային դաստիարակության: Ազգային դպրոցի վերաբերյալ ընդունված մի շարք փաստաթղթերում առանձնահատուկ նշանակություն է տրվում նաև հասունացող սերնդին աշխատանքի նախապատրաստելու հույժ կարևոր գործի արմատական բարելավմանը: Եվ դա միանգամայն հասկանալի է. ինչպես էլ որ դասավորվի դպրոցի շրջանավարտների հետագա ճակատագիրը, աշխատանքային կոփվածքը նրանց անհրաժեշտ է գործունեության ցանկացած ոլորտում: Ուստի, այդ խնդրի իրականացմանը մեծապես նպաստում է նաև ավագ սերնդի աշխատանքային ավանդույթների խելացի օգտագործումը:

---

[2] Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1959, էջ 7:
[3] Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ.4, Երևան, 1969, էջ 90-92:

Դարեր շարունակ հասունացող սերնդի աշխատանքային պատրաստությունը ավանդույթ է եղել ժողովրդական մանկավարժության մեջ: Ժողովուրդը աշխատանքի ու արհեստների գովքն է արել նաև հեքիաթներում, առակներում ու բարոյախրատական զրույցներում: Առանց չափազանցության կարելի է ասել, որ ժողովրդական մանկավարժության առաջնակարգ թեման եղել է աշխատասիրության դաստիարակումը: Բոլոր ժամանակներում էլ աշխատավոր ժողովուրդը մշտապես գիտակցել է աշխատանքի դաստիարակչական դերը և ձգտել տարբեր ձևերով ու մեթոդներով աշխատանքային դաստիարակություն տալ իր զավակներին:

Այդ տեսանկյունով էլ աշխատանքային ավանդույթների պրոբլեմը, դրանց մանկավարժական նշանակության հարցը հետաքրքրել է բոլոր ականավոր մանկավարժներին՝ Կոմենսկուն, Ռուսոյին, Պեստալոցցուն, Դիստերվեգին, Ուշինսկուն, Աբովյանին, Աղայանին, Իսահակ Հարությունյանին, Ռաֆֆուն և այլ ականավոր գործիչների, մտավորականների:

Հայ մանկավարժները այն միտքն են հայտնել, որ երկրում տարածելով աշխատանքի առաջավոր ձևերն ու մեթոդները, դրանով իսկ նպաստած կլինեն աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ու նյութական բարիքների առատությանը, որով կապահովվի հասարակության յուրաքանչյուր անդամի տանելի կյանքը: Աշխատանքային դաստիարակությունն ամենից առաջ համարել են ժողովրդի գոյության պայման, ժողովրդի մտավոր վերելքի միջոց:

Այսպես օրինակ, մեծ լուսավորիչ մանկավարժ Խ.Աբովյանը բարոյական դաստիարակության համակարգում կարևոր տեղ է տալիս նաև աշխատանքային դաստիարակությանը, նկատի ունենալով դրանց գործնական բնույթը, օգտակարությունն առօրյա կյանքում, նաև բարոյական ներգործությունը: Մեծ լուսավորիչը գրում է. «Մարդու ուրախության ու բարեկեցության հիմքը աշխատանքն է, իսկ ծուլությունը դժբախտություն, չարիք է, որի դեմ պետք է պայքարել անխնա: Աշխատասիրությունը հարկավոր է փոքրուց պատվաստել և երեխաների մեջ ստեղծել աշխատանքային լավագույն ավանդույթներ ու սովորություններ»:[4]

Ըստ Աղայանի բարոյականության ակունքներից մեկը աշխատանքն է, որը նյութական և հոգեկան բոլոր հատկությունների աղբյուրն է: Այն անչափ բարերար է ազդում մարդկանց բարոյական հատկությունների ձևավորման վրա: «Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես

---

[4] Արշավիր Շավարշյան, Հայ մանկավարժներ, Երևան, 1958, հ. 1, էջ 68:

ծուլությունը ծնող է ամենայն մոլորության»:[5] Հետևապես պետք է վաղ հասակից երեխային դաստիարակել աշխատանքային ավանդույթներով, նրան նախապատրաստել աշխատանքային գործունեության համար: Աշխատանքային դաստիարակության, աշխատավոր ժողովրդի լավագույն ավանդույթների մասին Աղայանի հիմնարար դրույթները մարմնավորվել են նրա գեղարվեստական ստեղծագործություններում՝ «Տորք Անգեղ»-ում, «Անահիտ»-ում, որոնցից շատերը տեղ են գտել նաև «Մայրենի լեզվի» դպրոցական դասագրքերում և այսօր էլ՝ հայ անվանի մանկավարժների դրույթները աշխատանքային ավանդույթների մասին, մեծապես նպաստում են հայեցի կրթություն տվող դպրոցի աշակերտների բարոյական դաստիարակության գործին:

Այսպիսով, աշխատանքային դաստիարակությունը ժողովրդական ավանդույթների հիմքն է: Այն պետք է ամեն կերպ դրվատել և կենսագործել: Ուստի, մեր կարծիքով, միանգամայն ճիշտ են վարվում այն մանկավարժները, ովքեր իրենց աշխատություններում նշում են, որ աճող սերնդի դաստիարակության նպատակով այսօր էլ կարելի է օգտագործել աշխատանքային դաստիարակության այնպիսի ձևեր ու միջոցներ, ինչպես ավագ սերնդի մարդկանց հետ սովորողների «հատուկ հանդիպումները» աշխատանքի վետերանների, արտադրական ձեռնարկությունների աշխատողների հետ, «հանրօգուտ աշխատանքի», «շաբաթօրյակների» կազմակերպումը դպրոցում, աշխատանքի հանգստի ծամբարում, ավանդական «բերքի տոնի» հանդիսավոր նշելը, դպրոցում «մասնագիտական կողմնորոշման կաբինետի» ստեղծումը, «բարի երթ շրջանավարտներին» և այլ բազմաբնույթ թեմաներով զեկուցումների ու միջոցառումների կազմակերպումը:

Այդ տեսանկյունով փորձենք ԼՂՀ հանրակրթական դպրոցներում կատարած մեր ուսումնասիրությունների հիման վրա պարզաբանել /մեր կողմից կազմակերպվել է նաև հիմնահարցի հետ կապված բազմատիպ միջոցառումներ Ա.Բ./ սովորողների աշխատանքային ավանդույթների ոգով դ ա ս տ ի ա ր ա կ ե լ ու ուղղությամբ իրականացվող ուսանելի փորձը:

Գյուղատնտեսական աշխատանքի նկատմամբ սեր դաստիարակելու առումով անչափ արդյունավետ էր վետերանների հետ հանդիպումը, որ հնարավորություն է տալիս աշակերտներին ավելի պարզորոշ ու խորը զգալու աշխատանքի մարդկանց վեհությունն ու գեղեցկությունը, մոտիկից ծանոթանալու ժողվրդական տնտեսության տարբեր ճյուղերի աշխատավորների կյանքին, համեմատաբար ճիշտ կողմնորոշվելու մասնագիտություն ընտրելիս: Ուշա-

---

[5] Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 571:

գրավ էր նաև դպրոցականների ուժերով կազմակերպված գեղարվեստական ինքնագործունեության ելույթները, աշխատանքի վետերանների, գիտության բնագավառի այլ անվանի գործիչների մասին, որին մասնակցում էին նաև փորձուսուցման մասնակից ուսանողները:

Դպրոցականներին հանրօգուտ աշխատանքին նախապատրաստելու գործում մեծ դեր են կատարում շաբաթօրյակները դպրոցամերձ հողամասում, քաղաքի, շրջվարչակազմի, գյուղի տարածքում, ինչպես նաև աշխատանքի և հանգստի ճամբարներում: Այսպես, օրինակ, հանրօգուտ աշխատանքի հիանալի օրինակ են տվել Նորագյուղի, Խանաբադի, Չանախչու, Խրամորթի /Ասկերանի շրջան/, Հաթերքի, Թալիշի /Մարտակերտի շրջ./, Գիշու, Հերհերի, Ճարտարի, Սոսի /Մարտունու շրջ./, Ազոխի, Բանազուրի, Ուխտածորի /Հադրութի շրջ./, Բերձորի, Եղծահողի /Քաշաթաղի շրջ./ և այլ ուրիշ դպրոցներ, որոնք իրենց բազմաբովանդակ դաստիարակչական աշխատանքով վաստակել են աշակերտների և նրանց ծնողների, հասարակության հարգանքը:

Հանրապետության մի շարք դպրոցներում վաղուց ավանդույթ է դարձել բերքահավաքի եռուն շրջանում մեծահասակների հետ ավագ դպրոցականների գործուն մասնակցությունը խաղողաքաղի, եգիպտացորենի, ցորենի բերքի հավաքման և գյուղատնտեսական այլ աշխատանքներին, իսկ շատ դպրոցներում վաղուց ավանդույթ է դարձել «բերքի տոնի» նշումը: Դպրոցներում տարրական դասարանների սովորողները զբաղվում էին ծաղիկների մշակումով և կոնկրետ պատկերացում ստանում ծաղկաբուծության մասին: Հաճախ էլ կազմակերպում են էքսկուրսիա դեպի դաշտերը, արհեստանոցները, որտեղ կատարում են բոստանաբանջարանոցային կուլտուրաների մշակման և այգեգործության աշխատանքներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԼՂՀ հանրակրթական մի շարք դպրոցներում ավանդույթ է դարձել այն, երբ շրջանավարտները իրենց պատրաստած պարագաներից հիշատակ են թողնում: «Նվերներ հարազատ դպրոցին» ավանդույթը ստեղծել են բարձր դասարանցիները:

Ուշագրավ է այն, որ դպրոցներում ստեղծվել ու կահավորվել է մասնագիտական կողմնորոշման կաբինետ, որտեղ տեղավորված են անհրաժեշտ սարքավորումներ, դիդակտիկ նյութեր, շրջանի արտադրության առաջավորների, աշխատանքի հերոսների, վետերանների նկարներ ու կենսագիրներ: Մանկավարժական կոլեկտիվների՝ մասնագիտական կոմնորոշման ուղղությամբ աշխատանքի արդյունքը այն է, որ վերջին 10 տարիների ընթացքում շրջանավարտների մեծամասնությունը աշխատանքի ուղեգիր է ստանում գյուղատնտեսության, մեխանիզացիայի և այլ մասնագիտությունների ուղղու-

թյամբ: Մի շարք դպրոցներում /հատկապես Ստեփանակերտ քաղաքի թ. 1, 2, 3, 5, 9 և այլն/ ստեղծված են ժամանակակից պահանջներին համապատասխան կահավորված փայտամշակման, մետաղամշակման, գյուղատնտեսական մեքենաների ուսումնասիրման, ինչպես նաև համակարգչային կաբինետներ:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում նկատել ենք, որ մի շարք դպրոցներում խնամքով պահպանվում են շրջանավարտների «Իմ երազանքը», «Իմ սիրած մասնագիտությունը», «Ինչ եմ ուզում դառնալ» թեմաներով շարադրությունները, որոնք աչքի են ընկնում խոր բովանդակությամբ, սրտառուչ խոսքերով:

Վերոհիշյալ փաստագրական տվյալները հավաստում են, որ աշխատանքային ավանդույթներում դաստիարակչական արժեք ներկայացնող օգտակար շատ բան կա: Ըստ որում, այդ ավանդույթները կենսունակ են ոչ միայն աշխատանքային դաստիարակության բովանդակության, այլև երեխաներին աշխատանքին հաղորդակից դարձնելու կոնկրետ միջոցների ու ձևերի, մեթոդների տեսանկյունից: Ճիշտ է, աշխատանքային ավանդույթներում և դաստիարակության պրակտիկայում մարդկանց զգացմունքներն ու մտքերը, պահանջմունքներն ու ձգտումները անկրկնելի յուրատեսակությամբ են դրսևորվում, սակայն ընդհանուրն այն է, որ արտադրողական աշխատանքը ոչ միայն մարդկանց գոյության աղբյուրն է, կյանքի հիմնական պայման, այլև նրանց համակողմանի ու ներդաշնակ զարգացման հիմնական միջոց:

Աշխատանքային ավանդույթները հարուստ նյութ են տալիս դպրոցականների բարոյական դաստիարակության օպտիմալացման համար և ամենօրյա ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում հաճախակի պիտի դիմել աշխատանքային հին ու նոր ավանդույթներին: